ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Էլմիրա Արմենի Վարդանյանի <<Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները>> թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԻԴ.03.01 <<Աշխարհագրություն>> մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Պաշտպանության ներկայացված աշխատանքի արդիականությունը: Միջազգային ամենատարբեր հարթակներում իրենց լավագույնս դրսևորած <<Լանդշաֆտային պլանավորման>> և <<Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի>> գործիքակազմերը, որոնք ներկայացված ատենախոսության մեջ լայնորեն կիրառվել են, արտացոլում են իրականացված աշխատանքի արդիականությունը և կարևորությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ պլանավորման աշխատանքներում:

Աշխատանքի նպատակն է Տավուշի մարզի լանդշաֆտների, որպես բնահասարակական երկրահամակարգերի՝ արդի վիճակի համալիր ուսումնասիրությամբ փոփոխությունների բացահայտումը և բնական միջավայրի էկոլոգիական բարելավման ուղիների առանձնացումը: Հստակ ձևավորված այս նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են կոնկրետ խնդիրներ: Հետազոտությունների արդյունքների գիտական ամփոփման արդյունքում ձևավորվել և պաշտպանության են ներկայացվել չորս հիմնադրույթներ:

Ատենախոսության սեղմագրի, ինչպես նաև հրատարակված գիտական հոդվածների արդյունքների հիման վրա, որպես թեզի գիտական նորույթ կարելի է համարել հետևյալը.

1. Առաջին անգամ իրականցվել է Տավուշի մարզի լանդշաֆտային գոտիների, մասնավորապես անտառածածկի, վերին չորրորդականում տարածված սահմանների հնէաշխարհագրական վերակառուցում,
2. Տավուշի մարզի լանդշաֆտների տարածա-ժամանակային փոփոխությունների միտումները բացահայտվել են հատուկ/ընտրված ինդիկատորների (անտառածածկի փոփոխություն, անտառային զանգվածների ֆրագմենտացիա, անտառածածկի

եզրագծի բարդացում, անթրոպոգեն ծանրաբեռնվածություն, սողանքային և սելավային երևույթների ակտիվացում և այլն) օգնությամբ,

3. Առաջին անգամ իրականացվել է մարզի յուրաքանչյուր բնամարդածին լանդշաֆտային գոտու որպես առանձին բնահասարակական երկրահամակարգի, անթրոպոգեն ծանրաբեռնվածության տեղաբաշխման վերլուծություն,
4. Մշակվել են մարզի բնահասարակական երկրահամակարգերի տարածքային զարգացման նպատակները՝ լանդշաֆտային պլանավորման և աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (ԱՏՀ) գործիքակազմի կիրառման լույսի ներքո:

Էկոլոգաաշխարհագրական համալիր ուսումնասիրությունների արդյունքում ատենախոսը բացահայտել և ներկայացրել է մարզի հիմնական մարդածին և բնական կոնֆլիկտները և դրանց տարածական բաշխումը: Էկոլոգիական լարվածության առանձնացված տարածքների համար առաջարկվել են բնապահպանության և արդյունավետ բնօգտագործման միջոցառումներ՝ իրենց համապատասխան հասցեատերերով:

Ատենախոսության համապատասխան գլուխների վերաբերյալ հրատարակվել է գիտական 6 հոդված, որոնք տպագրվել են տեղական և միջազգային գրախոսվող ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքի, բովանդակության և ձևավորման մասին: Կարծիքի ներկայացված այս ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն աշխատանք է և աչքի է ընկնում հստակ կառուցվածքով և տրամաբանական շարադրանքի հաջորդականությամբ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 143 էջի վրա, որը հագեցած է աղյուսակային և քարտեզագրական նյութերով, որոնք լրացնում են տեքստային շարադրանքը և հեշտացնում ընկալումը: Աշխատանքում բերված է 13 աղյուսակ, 24 նկար և 17 հավելված (14 էջ): Մեջբերված գրականության ցանկը բաղկացած է 130 անուն գրական աղբյուրներից՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ատենախոսության վերաբերյալ դրական այս եզրահանգումների հետ միասին իմ կողմից նկատվել են որոշակի թերություններ և բացթողումներ, որոնք ներկայացվում են ստորև՝

1. Ատենախոսության տեսական հիմնավորումը քիչ է ներկայացված, որը երբեմն թույլ չի տալիս ամբողջական ընկալել կատարված աշխատանքը, քանի որ վերջինս իր մեջ ինտեգրում է ֆիզիկական աշխարհագրության, էկոլոգիայի, սոցիալ-տնտեսական միջավայրի և տարածական պլանավորման տարրեր ու մեթոդական մոտեցումներ:
2. Բովանդակային իմաստով կարծում եմ ճիշտ կլիներ 4-րդ գլուխը, որը վերնագրված է <<Տավուշի մարզի լանդշաֆտների էկոլոգիական բարելավման ուղիները՝ լանդշաֆտային պլանավորման գործիքի կիրառման լույսի ներքո>> տրոհվեր առնվազն երկու առանձին գլուխների. <<Տավուշի մարզի լանդշաֆտների անթրոպոգեն ծանրաբեռնվածության գնահատումը>> և <<Տավուշի մարզի տարածքային լանդշաֆտային պլանավորումը>>: Այս պարագայում, մեթոդական իմաստով, էականորեն կտարբերվեին և կշեշտադրվեին անթրոպոգեն ծանրաբեռնվածության գանահատակը և ապա դրա հիման վրա, ելնելով լանդշաֆտային գոտիների ներուժի և կոնֆլիկտների գնահատման արդյունքների հիման վրա անցում կատարել գործողությունների ու միջոցառումների քարտեզին և բացատրական աղյուսակային տեքստին:
3. Տավուշի մարզի լանդշաֆտների դինամիկայի փոփոխություններն ուսումնասիրելու համար ընտրված և վերլուծված ինդիկատորները սահմանափակ են և, իմ կարծիքով, դրանք կարող են ավելի շատ լինել: Մասնավորապես քիչ անդրադարձ է կատարվել սողանքային և սելավային երևույթների ակտիվացմանը, որոնք շատ ակնհայտ աճի միտում ունեն, թե ՀՀ-ում և թե Տավուշի մարզում:
4. Մեջբերված գրական աղբյուրների գրականության ցանկում առկա են որոշ տեխնիկական թերություններ. Գրական տարալեզու աղբյուրների ներկայացման հետ կապված կետադրական անճշտություններ և բացթողումներ:

Ատենախոսության մեջ իմ կողմից նկատված թերությունները և կատարված դիտողությունները սկզբունքային բնույթ չեն կրում և չեն կարող ազդել ատենախոսության որակի ամբողջական գնահատման վրա:

Իմ կարծիքով Էլմիրա Վարդանյանի **<<Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները>>** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԻԴ.03.01. <<Աշխարհագրություն>> մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թվանիշին, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսություններին

ներկայացվող բոլոր պահանջներին և հեղինակը միանգամայն արժանի է աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Վլադիմիր Բոյնագրյան

Պրոֆեսոր Վլադիմիր Բոյնագրյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝ Մերի Հովհաննիսյան